

ՊԱՏԵՐԱՆ

ՊԱՆԿԱՐԻՍ

Տարեկան . . 12 Ձր.
Վեցամսեայ . . 6 "


ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Երկու թիւ մէկ ծրարով
Տարեկան . . 14 Ձր.
Վեցամսեայ . . 7 "

ԱՍԵՐԻԿԱ

Տարեկան 2,60 Տօլար
Վեցամսեայ 1,50 "
Կ Ա Ն Խ Ի Կ


Ծրարներուն տարողը
20 ասնդիւն



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԵՆ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ



tion du journal

„Iravounk“

VARNA (Bulgarie)

Редакция

на ВѢСТНИКЪ

„Иравункъ“

ВАРНА (България)

Գրողները եւս
չեն տրուիր

Բ Ա Ռ Ա Ր Ա Ն

ՊԱՆԿԱՐԵՐԵՆ—ՀԱՅԵՐԵՆ—ՏԱՃԿԵՐԵՆ

Յ Օ Ր Ի Ն Ե Ց

ԱՍԱՏՈՒՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ

Այս աշխատասիրութիւնը որ իր տեսակին մէջ առաջինն է, կուգայ պուլկարաճարաց պուլկարերէն լեզուի ուսման համար՝ կարեւոր մէկ պակասը լեցնելու, Ամբողջ գործը որ 500է աւելի երկսիւնակ երեսներէ պիտի բաղկանայ, ընտիր թուղթի վրայ մաքուր տպագրութեամբ, կը պարունակէ պուլկարերէն լեզուին գործածական գրեթէ բոլոր բառերը և ոճերը—մօտ 30,000, Սկիզբը բացի յառաջաբանէն ունի ընդարձակ նախադասութիւնք մը որ քերականական և բառագիտական կարեւոր ծանօթութիւններ կը պարունակէ: Պուլկարերէնը պաշտօնական նոր ուղղագրական դրութեամբ պատրաստուած է, հայերէնը՝ շատ կոկիկ և մաքուր աշխարհաբարով մը, իսկ տաճկերէնը դիւրահասկանալի լեզուով մը:

Գործը այժմ մամուլ տակ է, որուն առաջին մէկ ելուստը պրակները լոյս տեսած են արդէն և մնացեալին տպագրութիւնը մեծ փութով յառաջ կը տալու՝ այս նպատակով կազմուած Մասնա-նախուժութիւն հսկողութեան տակ: Պուլկարերէն բառարանի մը անհրաժեշտ պէտքը վաղուց ի վեր զգալի էր թէ հայ ուսանողութեան և թէ առհասարակ ամեն դասակարգի ու գիտնացողները այս պատեհ առիթէն օգտուելով կը յուսաւք թէ պիտի փութան բաժանորդ գրուիլ զոր այսօրուցն սկսեալ բացուած կը հրատարակենք:

Բաժանորդագիրն է 3 ֆրանք կամ իսկ ճամբու ծախքը մեր վրայ: Տպագրութիւնը երբ ամբողջովին աւարտի, բաժանորդը այն ատեն պիտի ստանան բառարանը կազմուած իսկ եթէ ուզողները ըլլան, հրատարակուած պրակները հետզհետէ (չորսը մէկ ծրարով) կընանք զրկել: Տպագրութիւնը աւարտելէն վերջը զինք պիտի բարձրանայ, Դրամի փոխարէն նաժանգործով չընդունուիր:

Հասցիներն մէկ մասն յատկացուած է քաղաքիս Աղզ. վարժարանին:

Փափաքողք բաժանորդագրուելու համար դիմելու են Մասնա-խուժութիւն գանձապետին հետեւեալ հասցեով՝

Տ. Մարտիրոս Յակոբեան, Սօփիա:

ՄԱՍՆԱԽՈՒՄԲ

ԹՐԲԱ-ՇԵԼԼԵՆԱԿԱՆ ԿԱՑՈՐՈՒԹԻՒՆ

Հօտորէն հանգեսին մէջ կը կարդանք Ֆիլիպէ մայիս 2 ին գրուած հետեւեալ հետաքրքրաշարժ նամակը:

Խնդիր կայ՝ երեւակայական ծրագրի մը որ կը վերագրուի Տօքթ. Պէլլօ անունով յոյն երեսփոխանին:

Այս երեսփոխանը այժմ Պոլիս կը գտնուի, եւ հոն, խլամ հասարակութեան մէջ, բոլորակամ կընէ թուրքիոյ եւ Յունաստանի միջեւ աշխարհակ միացումի մը համար:

Այս երկու երկիրները, ըստ Տօք.

Պէլլօյի ծրագրին, մէկ կայսրութեան վերածուելու են, Աւստրիոյ եւ Հունգարիոյ կամ ալ աւելի Բրուսիոյ եւ ուրիշ գերմանական երկիրներու նման: Սուլթանը Բիւզանդիոյ կայսր հռչակուելու է, իր երկիրներուն մէջ տարածուած յոյներուն վեհապետը լինելուն պատճառաւ: Այլ եւս թուրքիա եւ Յունաստան միայն մէկ պատերազմական նախարարութիւն ունենալու են Պոլսոյ մէջ, եւ միայն մէկ ծովային նախարարութիւն Աթէնքի մէջ: Երկու միացեալ երկիրներուն զիւրաւարտական յարաբերութիւնները Պոլիսէն կատարուելու են:

Տօք. Պէլլօ, կըսուի թէ, ուն-

կնդրութիւն պիտի ուզէ Մեծ Եպար-դոսէն եւ Սուլթանէն, անոնց բացառ-րելու համար իր քաղաքական ուրուա-գիծը եւ ծրագիրը:

Կը վստահեցնեն մանաւանդ թէ յոյները հաճութեամբ պիտի ընդունին Տօք. Պէլլօյի երազած կարգադ-րութիւնը: Բայց այն ատեն ո՞ր պի-տի մնայ Հելլենական երազը թէ յու-նական դրօշակը կրկին Այա-Սօֆիայի վրայ պիտի ծածանէր: Նաեւ չեն ը-սեր թէ Եոթկիոս թագաւորը ի՞նչ կը մտածէ Տօք. Պէլլօյի այս նախաձեռնու-թեան նկատմամբ:

ՆԱՍԱԿ ՊՈԼՍԵՆ

Պոլիս, 26 Ապրիլ

Օգտակար դատեցի կարգ մը դի-ւանագէտներու գիմել անոնց կարծիքը հասկնալու համար Սէլանիկի զէպե-րուն եւ անոնց հեղինակներուն հե-տեւած նպատակի մասին: Այդ առ-թիւ Պուլկարական խնդրոյն շատ ան-նպատեւ խիստ բացատրութիւններ տրուեցան ինձ: Կըսեն թէ այն հա-մակրութիւնը զոր կը վայելէին Մա-կիդոնացի պուլկար յեղափոխականնե-րը եւրոպայի մէջ շատ մը քաղաքա-գէտ անձնաւորութիւններէ, մեծապէս պակասեցաւ, եւ պիտի անհետանայ իսկ:

Դիւանագէտները կը նկատեն թէ յեղափոխականներուն նպատակն է պե-տութիւններէն մէկուն գրաւել տալ Սէլանիկը, ինչ որ անհաւանական է եւրոպական պետութեանց տեսակէտ-ներու ներկայ տարբերութեանց պատ-ճառաւ:

Վերջապէս կըսեն թէ այս շարժում-ներուն արդիւնքը պիտի ըլլայ Դրան բարոյապէս ուժ տալ խռովարարնե-րու (*) զէմ իր խիստ միջոցները ձեռք առնելու:

Միւս կողմէ շատ մը թուրք պաշ-տօնեաներու կարծիքն է թէ Սէլանի-կի զէպերուն եւ ուրիշ յեղափոխա-կան գործողութեանց հետեւանօք ան-պատճառ պէտք պիտի ըլլայ թուրքիոյ եւ Պուլկարիոյ միջեւ պատերազմ մը: Անոնք բնաւ կասկած չունին թէ օս-մանցիք պիտի յաղթող հանդիսանան եւ կը յուսան որ Պուլկարիոյ յաղ-թուելովը յեղափոխական շարժումները բոլորովին պիտի դադրին, ինչպէս նոյնը եղաւ Յունաստանի համար:

Դիւանագիտական շրջանակներու մէջ ալ այս միեւնոյն համոզումը տա-րածուիլ կը սկսի:

Նոյն իսկ օսմ. պաշտօնական շրջա-

նակներու մէջ հետզհետէ համոզում կը գոյանայ թէ Պուլկարիոյ զէմ պատե-րազմը անխուսափելի է. պետական կեդրոնական զանձը դրամական պատ-րաստութիւններ կը տեսնէ, Եւրա-զէն հրաման տրուած է բոլոր նա-հանգներուն որ շուտով դրամ հասցնեն Սալոնիկին: Բայց պատրաստ դրամ խիստ քիչ կը գտնուի:

..

Աւսանացիներուն շարժումին պատրուակովը Սքիպի եւ Միթրովի-ցայի միջեւ հաւաքուած զինուորա-կան ուժը աւելի Պուլկարիոյ զէմ սպանալիք կը նկատուի լատտեղ-եակ շրջանակներու մէջ: (*)

Սքիպի եւ Միթրովիցայի կողմերը համախմբուած զինուորական ուժն այ-ժմ կը հասնի 81 Վաշտի եւ 5 հրետանի-որոնք Իթէկի եւ Ճագովայի վրայ պի-տի քալէին ուր աւսանացի պետեր չէին ուզեր Դրան հնազանդիլ:

Ասկէ զատ այն կողմերը կերթան 16 վաշտեր Մանասթըրէն, 16 վաշտ իլալիկ ալ կը պատրաստուի մեկնելու:

Այս ուժերէն զատ կիսարիոյ ռէսիֆի զօրաբաժինն ալ պատրաստութեան մէջ է կըսուի:

Իւրաքանչիւր վաշտ 700-800 մարդէ կը բաղկանայ 15 սպաներով, որով ընդհանուր պատրաստ զօրաց թիւը հետեւեալ կերպով կարելի է ցոյց տալ:

ՉինՈՒՈՐ. Աղզամ 82,000. ռէսիֆ 43,000, իլալիկ 12,000, ամբողջ 157000 մարդ:

Ասոնցմէ զատ կան Բ. եւ Գ. զօրա-բանակին 9500 հեծեալները:

12 սպաներ որոնք իրենց ուսումը Գերմանիա աւարտեցին իբրեւ վերա-քննիչ կը զրկուին նոյն բանակը:

..

Ոստիկանութեան հսկողութիւնը օր ըստ օրէ կաւելնայ քաղաքին մէջ, մանաւանդ Բերա քանի մը օրէ ի վեր լուր տարածուած է թէ Պուլկարները դաւադրութիւն պատրաստած են մեր քաղաքին մէջ:

Դիւանագիտականներուն, պուլկարե-քաղաքականին շուրջը հսկողութիւննե-րը աւելի են:

Պուլկարաց տուներ կը խուզարկուին որոնց մէկ մասը բարձր դասուն կը պատկանի:

Կիրակի գիշեր ոստիկանութիւնը

(*) Աւելի ճիշդը, Դուռը մէկ զըն-դակով երկու թուղն զարկած եղաւ, թէ Աւսանացիները կը զսպէ եւ թէ Պուլկարները կը վախցնէ:

Տիմիթրով վաճառականին տունը կոխեց, այդ տունը յուսակա՛ն հիւսկառարանին կից է, հոն կը բնակի Պուլկարիոյ ներկայացուցչին Ա. գրա-գիրը Մ. Նիքիթորովը։ Այս խուզարկութիւնը մեծ յուզում պատճառեց, երեսուն ոստիկաններ տանը շուրջը փողոցները պաշարեցին, որպէս զի փախուստը տնկարելի ընեն։ Այս խուզարկութեան պատճառն այն է թէ ժամանակէ մը ի վեր գիշերները մեր-ձակայ տունիւրէն մուրճերու ձայներ կը լսուին եղեր։ Մ. Նիքիթորովը բողոքեցիւն եւ իր պաշտօնական քարտը ցոյց տալուն հակառակ, ոստիկանները տանը բոլոր սենեակները մտան ու թուղթերը գրաւեցին, իսկ տունին մէջ գտնուողներուն բողոքն ալ տարին Ղալաթայի պահականոցը, ուրկէ ազատ ձգուեցան միայն հետեւեալ օրը պուլկարիոյ ներկայացուցչին միջամտութեան շնորհիւ։

Ներկայացուցչիւն այս ապօրինութեան գէժ խտրութիւնը բողոքեց Դրան եւ պահանջեց բոլոր թուղթերու վերադարձը։ Հետեւեալ օրը Տիմիթրով կանչուեցաւ Ղալաթա սէրային, ուր իրեն յանձնուեցան իր բոլոր թուղթերը պարկի մը մէջ դրուած։ Ոստիկանութիւնը նաեւ անոր յանձնելու գնաց Մ. Նիքիթորովի պատկանող ծրարը, բայց Տիմիթրով մերժեց առարկելով թէ այդ ծրարը իրեն չի պատկանիր։ Այս մերժումին վրայ ոստիկանութիւնը իրեն թուղթերն ալ չը տուաւ։ Կըսուի թէ բռնուած թուղթերուն մէջ վառասկար sofinաններ կան եղեր։

Ուրիշ նշանաւոր եւ առաջնակարգ պուլկար վաճառականներ ալ ձերբակալուեցան եւ խուզարկութեանց ենթարկուեցան, բայց Պուլկարիոյ ներկայացուցչին եւ ուրիշ գետպաններու միջամտութեանը շնորհիւ ազատ արձակուեցան, նաեւ հանրաժանօթ վաճառական Մ. Գոմանտիւրովը ձերբակալուեցաւ, հակառակ Մ. Կէչովի միջամտութեան դեռ չէ ազատուած։ Պուլկար Պալագարանի խանին մէջ շատ մը պուլկար վաճառականներու գրասենեակներ եւ մթերանոցներ խուզարկուեցան վերջին օրերս։

Նոյնպէս Միքիթորովի բոլոր քաղաքներուն մէջ շատ ձերբակալութիւններ եղած են։ Բանտերը կրկին լեցուած են։ Ներուսով ազատուած բոլոր անձերը վերստին բանտարկուեցան, միայն որոնք որ բանտէն ելնելէ յետոյ լեւր գացած ու յեղափխումներուն կցուած էին անոնք ազատ մնացին։

ԱՆՍՈՒԱՆԱԻ ՇԱՀԷՆԻ ՅԵՇԱՏԱԿԻՆ

(Շար. ճախորդ Բիւնէ)

Հարեւրապետը լաւ գիտնալով Միսոյի ինչ աստիճան գնդակահար եւ նշանաւոր ըլլալն, առանց ոստիկաններու հանգիստ քուէն խանգարելու մեր հերոս Միսոյին բարի ճանապարհ եւ յաջողութիւն կը մաղթէ։

Միսոն առանձին իր ուզած ճամբան կը բռնէ կերթալ։

Հարեւրապետն ալ գլխիկոր իր երեք ոստիկան զինուորներով Մուշ կը վերադառնայ ու պատահածն կ'առաջարկուի թեան կիմացնէ։ Կառավարութիւնը իրար կանցնի իսկոյն հիմնադրուածներ ճամբայ կը հանէ դէպի այն կողմը ուր կը կարծէ Միսոն ապաստանած ըլլալ։

Միսոն երկու օր քաղցէ վերջ վերջապէս յոգնութիւն կը զգայ եւ թէ անօթութիւն։ Կորուշէ այդ գիշերը գիւղի մը մէջ հանգստանալ, Հայ գիւղացիէ մը հիւրընկալութիւն կ'ուզէ եւ կընդունուի։ Միսոն խոր քուէն մը մէջ կը քնանայ եղեր երբ առաւօտեան խել մը ոստիկան զինուորներ գիւղի մէջ կը լեցուին եւ գիւղացիներէն տեղեկութիւն կը պահանջեն։ Միսոյի այն կողմերը տեսնուելու մասին։ Միսոն գիշերանց մտած էր այդ գիւղը եւ տանուէրէն զատ ոչ ոք չէր գիտեր իր հոն գտնուիլը։ Տանուէրէն վատարար սպան կ'առնէ իր տունը կը տանի, ուր որ Միսոն հարցանը գլխին ներքեւ գրած հանգիստ կը քնանար։ Սպան զանի կարթնցնէ։ Միսոն ալ թընալով իսկոյն հարցանը կ'առնէ,

բայց ի գո՛ւր, կը տեսնէ որ խել մը զինուած ոստիկաններէ պաշարուած է որոնք վայրկեանական կերպով զինքը կը կաշկանդեն։ Վերջապէս Միսոն ձիու մը վրայ նստեցուցած եւ ձեռքերը ուստարած ի պէս Մուշ կը մտցնեն եւ կը բանտարկեն ու քիչ յետոյ 15 տարի բերդարգելութեան կը դատապարտեն։

1890 հոկտեմբերին վերջերը Աքքեա հասնելէ քանի մը ամիս վերջ, քաղաքական յանցանքով 30 հայեր հոն հասան, որոնցմէ չորսը 5ական տարի բանտարկութեան դատապարտուած էին իսկ մնացեալը 5էն 15 տարի բերդարգելութեան։

Բերդարգել հայերուն մէջ միջին հասակաւ սիւ գէժքով՝ ծաղկատար՝ մօտաւորապէս 25—26 տարեկան՝ լուրջ եւ վեհածն բնաւորութեամբ մէկը կար։ Հետաքրքրուեցա՛նք. մեզ բնին թէ ինքը Տէրկէվանք՝ գիւղացի է եւ անուին է Միսիթար (Միսո) Սէֆէրետոյ։ Ինքը գրել կարգալ բանտին մէջ սորված էր, այնպէս որ իրեն պէտք եղած նամակները կրնար գրել տեսակ մը խաշորածեւ գրելով։

Միսոյի Աքքեա հասնելէն քանի օր վերջ, Մ. Գրեքեան, Տօնապետեան եւ ես շուտով ըմբռնեցինք անոր ինչպէս մէկը ըլլալը, եւ վերջէն իր բաղդակից ընկերները հաստատեցին մեր կարծիքն։

Միսոն իր վարքով բարքով եւ բնաւորութեամբ ամենուս համակրանաց արժանացած էր արդէն, եւ մենք զինքը կը սիրէինք իր ընկերներէն եւ հայրենակիցներէն աւելի։

Միսոն իր հայրենիքի մէջ կը թողուր ընտանիք եւ զաւակներ խեղճ ու կրակ վիճակի մը մէջ. հետեւաբար աւելորդ էր իր ընտանիքէն օգնութիւն եւ դրամ սպասել իր սպորուստին համար։ Մենք մեր կարողութեան չափով իր պէտքերը կը հոգայինք այնպէս որ բնաւ խտրութիւն չկար մէջերնին։ Իսկ Միսոն հակառակ մեր թախանձանաց լուացաբարութեան սկսեց. Աքքեա գտնուող 80ի չափ բերդարգել հայերուն ճերմակեղէնները

կը լուսնար եւ իր պէտքերը կը հոգար։

Միսոն իբր բերդարգել արտօնուած էր քաղաքին մէջ պտտելու, բերդէն դուրս չիցնելու պայմանաւ. բայց ինքը զինքը զ'առաի մը մէջ կը համարէր. որովհետեւ գործելու եւ օր առաջ կոռոյ դաշտը մտնելու փափաքը որդ մը եղած էր եւ իր սիրտն կը կրծէր, ամբողջ խելքը ու միտքը լեռներու եւ կիրճերու վրայ էր։

Աքքեա գտնուող քաղաքական յանցաւորներուն մէջ միայն հս էր որ ցկեանս չղթայակիր բանտարկութեան դատապարտուած էր, թէեւ Միսոյի չորս ընկերներն ալ բանտարկեալ էին 5 տարիի նամար, բայց ատոնք ըստ օրինի 3 տարիէն պիտի ազատուէին։

Յ. ՃԱՆԿԻԼԵԱՆ

(Շարունակելի)

ԿՈՄՍՈՒՅԻ ԳՕԼՈՆԱ ԵՒ ԻՐ ՈՐԲԱՆՈՅԸ

Բարիքի արուստ ձայներէն Նրուադի—Լը—Կուսի մէջ կ'օմսուէի Գօլօնայի հաստատած հայ օրբանոցի ժառին Տիար Մ. Չորազ մեր իրեն ուղղած հարցումին հետեւեալ պատասխանը կուտայ իր Լ'Առմէնի թերթով։

Խմբագրութիւն Իրաւունքի, Վառնա. — Սուրհանդակ չենք ընդունիր եւ Նուադի—Լը—Կուսի օրբանոցին նկատմամբ թղթակցութիւնը չենք տեսած։ Լրագրողի մը պարտականութիւններուն հաւատարիմ, հրատարակեցինք կոմսուէի Գօլօնայի եւ իր գործին նկատմամբ ինչ որ լսած եւ մեր աչքերով տեսած էինք։ Շարժումի թղթակցութիւնները մեր նկարագրածէն ոչինչ կարող չեն ջնջել։ Գալով այդ տիկիւնին «նկարագրի բարոյականին», կը պատասխանենք թէ իր ներքին կեանքը մեզ անձնօթ է ինչպէս անձնօթ են մեզ նաեւ Եւրոպայի եւ Ասիոյ մէջ գրե-

Ա. ԵՐՏԱՆԵԱՆ

(75)

ԹԻՍՊԱՐՏԸ

ՄԱՍՆ ԵՐՐՈՐԴ

ՎԱՍԻ ՓԱՇԱ ԵՒ ՎԱՆԱՆԱՆ

- Ինչպէ՛ս կը յանդգնիք ձեր ամուսնոյն «չարագործ» անուանել։
- Դուք ըսէ՛ք, միթէ՛ չարագործ չէր ամուսնինս... միթէ՛ անարդ մարդ մը չէ՞ր ան, երբ դուք այս դահլիճին մէջէն կ'իսամեռ վիճակով մը փողոցը նետեցիք զինքը։
- Ե՛ս։
- Այո՛, դուք։
- Պատճա՛ռը։
- Որովհետեւ ձեր թագաւորին սուրը համարձակած էր առջեւնիդ նետելու եւ ձեր տուած նշաններ ձեզի վերադարձնելու։
- Ո՞վ ըսաւ։
- Ի՛նքը... ամուսնինս։
- Սուտ խօսած է ձեզ։
- Երբէ՛ք... կեանքէն յոյսը կարող մարդը սուտ չը կրնար խօսիլ... Է՛հ, փաշա էֆէնտի՛, ամուսնոյս խօսքը չընենք... Դուք խօսեցէք թէ

ինչո՞ւ ձերբակալել տուիք զիս... Ի՛նչ ըրած է ձեզի կին մը, որուն անցեալը՝ աղետաւոր, ներկան՝ անիծեալ, իսկ ապագան՝...

Իսկ ապագան... բացառանչեց Վալին զայրու-թով մը։

- Չարհուրելի է...։
- Կարծեմ թէ խելքերնիդ կորուսած էք, տիկին։
- Ճշմարիտ է... խելքս կորսնցուցած եմ...։
- Բայց ո՞վ է յանցաւորը...։
- Ո՞վ է... հարցուց փաշան։
- Դո՛ւք։
- Ե՛ս։
- Այո՛, դո՛ւք... Ասիկա կըսեմ՝ առանց ծածկելու... թէ կուզէ՛ք՝ կախեցէք զիս... պատ-րաստ եմ...։

Վալի փաշա կատաղութեամբ մը տեղէն վեր ցառ-կեց ու կնոջ վրայ յարձակելու պէս շարժում մը ըրաւ։ Բայց կինը փոխանակ վախնալու, դէպի Վալին ուղղուեցաւ ու բարձրաձայն սկսաւ խնդալ... ու պօռալ անոր երեսին։

- Ա՛հ, խենթ է... բացառանչեց Վալին։
- Այո՛, խենթ եմ... ըսէ՛ք... մի՛ ամհաք։
- Բայց Աստուած կայ... մտածեցէ՛ք թէ տունս քան-դողը, ամուսնոյս արիւնը մանողը, մէկ հատիկ զաւակս կորսնցուցել տուողը դուք էք... այս ա-նիծեալ դահլիճն է, ուսկից արիւն եւ ոճիր կը հո-տի... մտածեցէ՛ք, կըսեմ, մտածեցէ՛ք թէ տուն քանդողին տունը Աստուած կը քանդէ... մտածեցէ՛ք թէ ընտանիքի մը արիւնը ձեր վիզն է...։
- Գիտէ՛ք թէ ո՛ւր կը գտնուիք եւ որո՞ւ գէժ

կը խօսիք, գոչեց Վալին իր զայրույթը չը կրնալով զսպել։

- Շատ աղէկ գիտեմ... այս դահլիճին մէջ կը գտնուիմ, ուր ոճրագործութիւններ կը յղացուին... յետոյ ձեր դէմը կը գտնուիմ որ ամուսնոյս, զաւակս ու իմ արիւնս մտաք։
- Վալին այս անգամ ձեռքը կը բարակաւ կոճակին դրաւ ու թիկնապահներէն մին կանչեց։ Երբ թիկնապահը ներս մտաւ,
- Տարէ՛ք այս կինը Տեղապահին յանձնելու, հրա-մայեց Վալին։
- Ի՛նչ պիտի ընեմ Տեղապահը, պօռաց կինը։ Դուք էք իմ ընտանիքիս արիւնը խմողը... ձեզի հետ է իմ դոքս։
- Դո՛ւքս, դո՛ւքս... ընդհատեց Վալի փաշա՝ պօռալով։

Թիկնապահը կնոջ ձեռքէն բռնեց որ դուրս հա-նելու կ'աշխատէր, անա՛ կինը կատաղութեամբ պօ-ռաց։

- Վա՛տ... սե՛ւ օձ... անիծեալ ըլլաք... զաւա՛կս, զաւա՛կս տուէ՛ք ինծի։
- Բայց թիկնապահը քաշկռտելով դահլիճէն դուրս ըրաւ զինքը։
- Չարմախի բա՛ն... աշխարհքիս վրայ կնոջ խենթութիւնն ալ տեսայ, բացառանչեց Վալին խն-դելով մէջ խղճուելով։
- Յետոյ ներսի սենեակը մտնելով, ուր կը սպասէր Վանական, յարեց։
- Սոսկա՛լ ըսան է կնոջ մը խենթութիւնը։
- Խենթ էր... հարցուց Վանական։
- Այո՛։

նուրդ ուրիշ Հայ որբանոցներու տնօրէններունը եւ տնօրէնութիւններունը: Մենք կ'կարծենք թէ լաւ է այն ցորչախ հակառակը չհաստատուի: Եթէ զանի պարսաւողները զօրաւոր ապացոյցներ ունին իրենց ծանր «ամբաստանութիւնները» հաստատող, ինչու Թրանսպարան գատարողներուն չեն դիմեր: Թուժայեանի դատը անոնց չտուրքեց: Եթէ Բարիքի մէջ գատարողներ կան:

Բարեթի օրը թերթը եւ խմբագրականով մը կ'ստանայ Գօլօսայի ծագումին եւ իր հաստատած որբանոցի մասին նպատակաւ տեղեկութիւններ կուտայ, աւելցնելով թէ այդ հաստատութիւնը ակաւնուոր անձնաւորութիւններէ բաղկացեալ պատուոյ յանձնարարութիւն մը հովանաւորութեան տակ կը գրտնուի:

ՀՐԷԻՅ ՋԱՐԴ

Չափի օրը եւ հետեւեալ օրը Բիշինեա քաղաքում քրիստոնեաները մեծ ջարդ են տեսել հրէաներին առանց որ եւ է պատճառի, հէնց միայն նրա համար, որ նրանք հրէաներ են եւ օրոյ կարգի թերթեր հալածում են նրանց: Բեթեթպուրի թերթերը լիքն են այդ ջարդի մանրամասն ներկայագրութիւններով: Մի ականաւոր տես պատմում է «Նովոստի» մէջ. «Չափից երկու շաբաթ առաջ արդէն քաղաքում խուռում էր, որ Չափին պիտի ջարդեն հրէաներին: Այդ լուրերը ճշտեցին առաջին իսկ օրը: Կողպտողները, թուով 200 հոգուց ոչ աւելի, բաժանուել էին 8-10 հոգուց բաղկացած խմբերի, հանգիստ կերպով յարձակում էին հրէաների տներին ու խանութներին վրայ, կողպտում, իսկ տէրերին կամ ջարդում կամ սպանում էին: Տները վրայ յարձակուելիս, ուր գտնուում էին միայն կանայք, կողպտողները գործում էին երկու-երեք հոգով: Մեծ

մասամբ կողպտողներն իրենց քստմեքի գործը կատարում էին տունական մեծ, հանգիստ ամբոխի աջի առաջ: Անորորութիւնը վերականգնել էր հագին: միայն երկրորդ օրը «Պետ. Վեդ.» թերթակիցը գրում է «Փողոցների տեսքը սարսափելի է: Փողոցների մի քանի մասերով անցնելն անյարմար է դարձել: Իբար վրայ կուտակուած են զանազան կահուորանքի, գաշնամուրների, պատկերների, ամանեղէնի կտորտանքներ: այս բոլորը ծածկուած է փետուրների հասա շերտով, որը խիստ քմուռ ժամանակ միջանցում է լոյսը: Հացի եւ առհասարակ ուտելիքների պակասութիւն է զգացւում: գները խիստ բարձրացել են: Օգնութիւն է կազմակերպւում: Կարմիր խաչի կայաներական ընկերութեան տեղական ճիւղը սկսել է իր գործողութիւնները: Հրէական հիւանդանոցը լիքն է սպանուածներով եւ վիրաւորներով:

Տիպիս Ն. Դ.

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Կովկասէ կը գրեն. «Վերջերս Պաթմուսի մէջ տխուր դէպք մըն ալ պատահած է. այն է Դաշնակցականի մը հին Հնչակեաններու կողմէ սպանուելը, բայց զոհին մէկ ազգականը իր վրէժխնդրութեան յագուրդ տալու համար յաջողութեամբ սպաննող տեղապահին ակնիւր կարել: Այս դէպքը կը յիշեցնէ կիսավայրենի ցեղերու վրիժառութեան եղանակը»:

— Նոյնպէս Պաթմուսի մէջ հրատարակուող Չերքեսուր, ռուս թերթը կը գրէ թէ ռուսական դաւաճութեան յարող Գրիգոր Բանեաթով անուն հայ քահանայ մը ատրճանակով անձնասպան եղած է: օրով հետեւ կարգ մը զեղծութիւններու համար դատի ենթարկուած է եւ

զեր այդ ազգուրաց չքահանան, որ Գեորգիան ճեմարանի նախկին աշակերտներէն էր:

— Տիգրիսի հայ հարուստներէն Տ. Միքայէլ Արամեան այդ քահանային մէջ քաղաքային հիւանդանոց մը հիմնելու համար 100,000 ռուբլի նւիրած է: Տիգրիսի քահանային պետութիւնը որոշած է կառուցուելիք այդ հիւանդանոցը Արամեան անուանել:

— Նոր Դարի խմբագիր Տ. Սպանդար Սպանդարեան ապրիլ 21ին կէս օրէն յետոյ ժամը 1ին հրապարակէն անցած առին յանկարծ ետեւի կողմէն ալ թեւին բիրի հարուած մը ընդունել է, եւ տեսել է որ 17-19 տարեկան աղայ մըն է զինք հարուածողը. փոքրիկ ստահակը յիշողը է փոխիլ միջին կայարան, որ բազմութեան մէջ անհետացել է:

— Գանձակի Բանանց գիւղէն Լեւոն Կոստանդեան վէճի բռնուելով 70 տարեկան հայ ծերուկի մը հետ ապտակել է: Ծերին տղան Լեւոնէ բացատրութիւն պահանջելուն ի պատասխան ապտակ մըն ալ ինք կընդունի: Այս վերջին ապտակը բոլորովին կը կատգեցնէ երիտասարդը, որ դաշոյն մը հանելով Լեւոնի սիրտը կը մխէ. սա անմիջապէս կը մեռնի:

Կովկասեան սա տխուր լուրերը անշուշտ լաւ տպաւորութիւն չեն ձգել մեր ընթերցողներուն վրայ:

— Սինա եւ Պէսիա անուն երկու հրէուհիներ հայ. եկեղեցւոյ գիրկը ընդունուելու համար Ս. Էլմիթեան Սինոգիին դիմած են. այս վերջինս ալ Կովկասի կառավարչապետէն արտօնութիւն ուղարկած է: Մենք կը կարծենք թէ այս արտօնութիւնը կը զլացուի, որովհետեւ Չարի կառավարաւ

թիւնը իր երկրին մէջ ամէն դաւանաւորութիւն դէպի ռուս եկեղեցւոյ գիրկը ընկալու պայմանաւ միայն կարտօնէ:

— Պոլսոյ Ազգ. հիւանդանոցին մէջ պատասպարոյ ոյներու թիւը վերջին օրերս 1102 ի հասեր է: Հիւանդանոցին վրայ նոր մաս մըն ալ պիտի աւելնայ, եւ այդ շինութիւնը մասին համար Հիւանդանոցին կից գտնուող գետինը գնելու բանակցութիւն կը կատարուի:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔԵՐ

ՆՈՐ ԵՐԴԱՐԱՆ ԿԱՄ ՄՐՄՈՒՋ ՀԱՅ-ԿԱԿԱՆ: Այս երգարանը Բ. Մարգարէ տպագրութեամբ աւելի ճոխարարած քան թիւնութեամբ է, եւ հակառակ դէպքին առանձնութեանը կը պարունակէ սգգային հին եւ նոր խիստ շաւ Գր. Գր. 1 Գր.

ՆԵՏԱ. ԿԱՄ ՄՐՄՈՒՍ ՊԱՍՏԱՆԸ: Պուշկարիոյ ազատութեան տալ Պուշկար գիւղացիին Թ. Բերէ կըրած տառապանքները ու անոնց նիստ ու կացը կը պատկերացնէ: Շու. հետաքրքրական: Գր. 50 ՍԱՆԻ:

ՀԱՅԹԵՆԻՔԻ ԶՈՂՆԵՐ: Պատկեր մը Տաճկահայաստանի իրական կեանքէն, գրեց Ղ. Նահապետեան: Զեղչեալ Գր. 1 Գր.

Այս գիրքերը տառաւոր համար պէտք է դիմել Իրաւունքի խմբագրութեան, բայց ի ծախքը 10 ակն տանթի միատեղ զրկելով. իսկ գիրքերու արժէքին համար, կ'ընտրէ գիրքութիւններ պահելու, կ'ընտրէ նախակազմը 10 0/0 զեղչով:

ԹԱԼԱՆԻ ՏԱՐԻՆ

— Որո՞ւ կ'ընեն էր:
— Սպաննուած Առաքել Էֆէնտի կ'ընէր...
— Այո՞...
— Յայտնի եղա՞ւ թէ որո՞նք էին զինքը սպաննողները:
— Յայտնի չեղաւ... բայց շատ հաւանական է որ այս խնդիր կ'ընէ մասնաւոր ուժերն մէջ եւ մեղաւորից մըն է:
— Ո՞վ գիտէ... մընջեց Վանական:
— Վալի փաշա քիչ մը հանդարտած էր. հետեւաբար կատարած կերպարանքը ծածկելու ջանաց ու հարցուց:
— Կարծե՞մ թէ առաջարկութիւնս ընդունեցի՞ք, անանկ չե՞:
— Պաշտօնի՞ վերաբերեալ... նկատել տուաւ Վանական:
— Այո՞:
— Պաշտօնի վերաբերեալ առաջարկութիւնս մը չեմ կ'ընար ընդունիլ:
— Հապա ի՞նչ պիտի ընես այսուհետեւ:
— Վանքս կը քաշուիմ:
— Ո՞չ, պէտք չէ՞ վանքը քաշուիլ: Ներկայիս մէջ կառավարութիւնն ու կրկրկն պայմանները պէտք ունին ձեզ նման կրօնաւորներու: Կըսեմ թէ պարտաւոր էք պաշտօնը չը մերժելու, որ իմ եւ ձեր Տեղապահին հրամանովը գրուած պիտի ըլլայ:
— Իմ անկարողութիւնս խոստովանելով Ձեր վրեժառութեանը կը պնդեմ թէ պաշտօնս մը չեմ կ'ընար ընդունիլ: Տեղապահը կարող է ուրիշ մէկը նշանակելու:
— Վալի փաշա չուզեց խոստովանալ վարուել, նկատ

տելով որ Տեղապահին հետ պիտի յաջողին համոզելու զինքը:
— Դացէ՛ք... ըսաւ Վալին: Կը յուսամ թէ Տեղապահին հետ կ'ընաք տեսնուել այս մասին ու ամեն բան կարգադրել...
— Վանական գլուխը ծնեց ու մեկնեցաւ:
— Վալի փաշա սերտէն վերաւորուած դաղանի մը պէս ոտքի ելաւ ու սկսաւ դահլիճին մէջ ման գալ: Կը յիշէր այն տեսարանը, ուր կ'ընէր կը գտնուէր իր դէմ եւ կ'ստաղդէր զինքը:
— Ո՞չ, խնդիր չէ՞ր այդ կ'ընէր... բացաքանչեց ինքնիքները: Յուսանաւորութիւնն էր որ իրեն ըսել կուտար... յուսանաւորութիւնն էր որ ամօթը պատուած էր անոր երեսէն: Փուճ տեղ խնդիր տեղ զրի զինքը... Պէտք էր խոհեմութեամբ մ'անոր ընդունէր գաղանքներ առնէր... իր ամուսինը խոստովանած է գործած մասնութիւնները... խոստովանած է թէ թագաւորի սուրը փաշային վերադառցուցած եմ... Այս բոլորը գիտէ այդ կ'ընէր: Կը մնայ այն լանտարիկալը զոր Առաքել Էֆէնտին ազատ արձակած է, այդ ալ հոս ըլլալու է անպատճառ եւ կ'ընէր գիտէ անոր ո՛ւր գտնուիլը:
Ու թիկնապաշտ կանչելով հրամայեց որ Տեղապահին երթայ ու անոր յանձնուած հայ կ'ընեն առնէր պարանքը բերէ:

Կառավարութեան թիւադրութեամբ՝ չարժան մէջ գրուած էին Վանայ նահանգին ամբողջ բոլոր ցեղապետներն, որոնք անօթի դայլերու պէս սկսած էին յարձակիլ անգէն ու անպաշտպան հայ գիւղերու վրայ: Արեւելի արցունքի ու աւերակներու մէջ ինկած էին թիւաբայ զեղերն ու ամբողջ Զատախ:
— Վերջապէս գաւառներէն հոսած լուրերը քստմեքի էին իրենց բովանդակ նշանակութեամբը:
— Վալի փաշա Մեծ-Մարգարտիկին կամքը կը կատարէր հաւատարմի շան քծնութեամբ մը: Եւ սակայն չէր ուզէր որ այդ գաղաղիլ ծրարէր յայտնի ըլլար... ասոր համար ջանաց յայտարարութիւններ տարածել քաղքին մէջ եւ բացէր իրաց արարապանի կողմէ վարութիւնը թէ՛ մեղաւորից մը չէ թալանի չարագործութեանց...
— Վալի փաշա կեղծ յայտարարութիւնը չկրցաւ համոզել ժողովուրդը, հետեւաբար յուզումը չը դադարեցաւ:
— Վանական եւ Ներսէս Արքեպիսկոպոս խորհրդակցութեան մը հաջորդութեամբ Առաջնորդական տեղապահին դիմել ու «Իրաց վարման մը» տանկու ճառը տեսնել:
— Տեղապահը միեւնի էր, երբ Ներսէս Արքեպիսկոպոս Վանական խորհրդակցութեան դահլիճը մտան ու յայտնեցին իրենց նպատակը:

(Շարունակելի)

ՀԱՎԱՏԻՍԱԹ

Թ Ի Ի Ր Ք Ի Ա

Էրմենի Չեքերի

Սթանպոլտան ապրիլ 30 թա-
րիսի էրմենի չեքերիներն տո-
լայը չու հոլտա մալիմաթ վերի-
լիյո :

Թիւրք մենպստընտան ներաք
իտեն հալախալս պիր գալ էրմենի
չեքերիին Աձեմիստան սիւնորն-
տան կեչտիքլիին պիտիւրիյորտը,
պոռ եսնըլլ տըր, զիրա Րոնսիս
սիւնորնտան մեքքիւր չեքերիին
կեչտիկի իշտիլիյոր : Հալպոռ քի
պոռ հալախալս տախի տոյրոռ
կեչտիւնմէյոր : զիրա թոռ սիւնոր
քեք սըգը սեքերտե մոռնափազա
օլլըմըլ տըր :

Սթանպոլտա պուլընան Մաքե-
թոնիւր պուլկարլարըն տեր հալ
մէմէքեթլերին կիթմէլերին վե
կիթմէլէլերի տախի ճեպրէն կեօն-
տերիլմէսի պապընտա պիր իրաւե
սուտուր իթմիլ օլտըլը վէլէր-
Բօշքա եազմըլ տըր :

Սթիւպտան վերիլէն պիր թէլէկ-
րաֆա պինայէն, Մարքօվա նամ
քեօյտէ պոմպալարը պուլըմաք
չիւքէսի իլէ հիւքիւմէթ մքքիւրէ
քեօյիւ խարապ իթմիլ տիր :

— Սթանպոլտան ալընան պիր
թէլէկրաֆա կեօրէ, ապրիլ 28է
գատար 888 պուլկար միւտէրիս-
լերի (՝) տերտէսթլէ հապս օլըն-
մըլլար : պուլկարտան 82սի սըրպ
ըմըլ :

Ալպանիս

Երւոյր քեօյիւնտէն ալընան
մալիմաթա կեօրէ, թիւրք ա-
քերիւրին իրէկէ կիթմէլերի պիր
գալ կիւն իշիւն թէլէլիւր օլմուլ
տըր, չունքի էօմէր Րուլտի փա-
չա եկնիտէն գուվէլի աքքերիէ
եկթիլմէսին պեքլէյէճէթ իմիլ :

Ֆազաթ պաշգա թարաֆլար-
տան անլալըլտըլընա պինաէն,
էօմէր Րուլտի բաշանըն իտարէսի
ալթընտա իգթիլգա օլտըլը գա-
տար աքքեր հազըր ըմըլ, լաքին
Արնափուտ րէյիսլերի իլէ սուլհէն
իշի հալ իթմէթ իշիւն Պապը Ա-
լինին մուխապէրէսի նէթիճէ պուլ-
մատըլը սէպէպլէ՝ աքքերիւրին ի-
րէկէ կիրմէսի թէլէլիւր օլընմըլ
օլտըլը ապրիլ 30 թարիսլի պիր
թէլիկրաֆ Սթանպոլտան պիրտի-
րիյոր :

Մաքերոնիս

Եարէլի աքքերիւրէ տօլու
մախսուս պիր չըմէնտըլէր գա-
թարը ապրիլ 30 տա Սէլանիքտէն
Սթանպոլա եկթիլմիլ օլտըլընը
թէլէկրաֆ պիրտիւրի :

— Սէլանիք էօնիւնտէ պուլընան
Աւստրօ-Հունգարիանըն հարպ փա-
բօրլարը կերի կիթմէթ իշիւն էմիր
ալտըլար, եալընը պիր վարօր
գալաճաք տըր :

— Մանաստըրտա կէչէն հաֆ-
թա գուհուր իտէն իթմիլալ վե
գըրկընա սէպէպլէթ վերէն գօ-
միթալար օլտըլընը իլք տէֆա
թիւրքլէր նէշր ու իլան իթմիլէր
իտի իսէտէ, գօնսօլարըն թա-
բօրթլարը աքքինի թէպէլիւն ի-
տէյօր : Եանի իսլամար ֆանա-
թիլիքլէրինտէն նաշի խրիսթի-
անլարը գըրմայա գալգըլտըլա-
րընտա, պիր թաքըմ պուլկարլար
քէնտի քէնտիլէրինի մուհաֆազա
իթմէթ իշիւն սիւհա վե տինամիթ
իսթիմուլ իթմիլէր : պուլնու ի-
զէրինէ աքքերիւր վե պապլիլէր
տախի իսլամ պաշըպօզուկարլէ
պէրապէր օլուպ թաթի կէթիւր-
տիլէրի խրիսթիանը գաթիլ ու
ճէրհ իթմիլէր տիր : շէհիւտէ վե
էթրաֆլարտա հէր միլլէթէ մէն
սուպ խրիսթիանլարտան մազթուլ-
լար վար : Եալընը բահուտիլէր
սէրպէսթ գալմըլլար :

Մաքերոնիստա Եանուտիլեր

— Ժոռնալ նամ կազէթանըն
Սէլանիք մուխալիւրինտէն ալմըլ
օլտըլը մէքթուպէր Րուլարըն
վե Եահուտիլէրին Պուլկարլարը
գալազալաքըլարընը նէֆրէթլէ
պիրտիլիյորլար :

Քիշնէվտէ (Րուսիա) վուգու
պուլան եահուտի գըրկընընտան
տօլայը պէլանը թէէսսիֆ իթտի-
կիթիլ չու սըրտա, անլէր Մա-
քէթոնիստա Պուլկարլարա գարը
իճրա իթտիլէրի գալազալըլէ՝ պե
հազգին թէքրար նէֆրէթիմիլ
մուհիպ օլլըլար, Տահա քիմէ-
նին խաթընտան չըպմըլ տըր
Սթանպոլ Եահուտիլէրին տախի
1896 տա խասքէօյտէ իշիլմիլ օլ-
տըլարը խապասէթի անլէր եիւզ-
լէրճէ միլլէթտալարըմըլըն գաթ-
լին սէպէպ օլտըլարընտան մա-
տա, քէր չօգ էրմէնի խանէլերինի
քէնտիլէր սօյուպ սօղանտ չէվիր-
տիլէրի ապա ունուլթմայաճաղըլ :

Սոն Մանասթըր վուգուաթըն-
տա աախի Եահուտիլէրին թիւրք-
լէր իլէ պիրլէշմիլ օլտըլարընա
տէլիլ չու տըր քիպիր հաֆթտան
պէրու շէհրի մէքքիւրտէ հիշ պիր
խրիսթիան էվիլտէն տըլարը չըգ-
մալա ճէսարէթ իտէմէտիկի հալ-
տէ՝ Եահուտիլէր տիքեանլարընը
աշուպ սէրպէսթճէ ախուլ իթա-
լարընա պազմազտա տըրլար : Դու
միլլէթէ ալթուն իֆրիթի վե ին-
սան ճէնապէթի նամը վէրիլիսէթ
աալա խաթա իշիլմիլ օլմայաճա-
ղըլ զանն իտէրիմ :

ՏԱԽԻԼԻԹԷ

Ֆէխամ. Բրէնս Ֆէրտինանտ
հազրէթլերի էվիլէրի կիւն Սօֆի-
այա եկթիլմիլ տիր :

— Պու սապահ շայի օլան րե-
վայէթէ պինայէն, վիքէլա րէյի-
սի Մ. Տօքթ. Տանէվ գապինէին
իսթիֆասընը Ֆէխամ. Բրէնս
թազտիմ իթմիլ տիր : Պու հա-
վատիսին ճիտտիլէթի թաստիգէ

միւլթաճ օլտըլը կիպի, պու սա-
աթա տէկին հիշ պիր թաֆսիլաթ
ալընմաթը տըր :

ԲՈՒՄԱՆԻԱ

Պուգրէշտէ վե պիլիւն Րու-
մանիստա հիւքիւմէթ պուլկար-
լարըն խանէ վե տիքեանլարընը
պալաճազտա վե թահարրիաթ իճ-
րա իթմէքտէ օլտըլը վէլէր. Բօշքա
եազրյօր :

Ի Թ Ա Ի Ա

Կէչէն բազար կիւնիւ Ճէնոփա-
տա էրմէնիստան վե Մաքէթոնիս
իշիւն պիր պէօյիւք միթիլնկ թե-
ճէմիւ օլընմըլ տըր :

Պու միթիլնկի իթալիս էհալի-
սի թիւրք հիւքիւմէթիւնի էրմէ-
իլէրէ վե Մաքէթոնիս խրիս-
թիանլարընա գարը իճրա իթ-
տիքի թէլիքիւթտան սօլալը
ըրթթէթ իտուպ, ահանմէլէր
մուհիպ էվրօրա տէօվէթլերին
Թիւրքիայը իճպար իթմէլիլերին
թալէպ իթմիլ տիր :

— Պու մաալտա Րոմատա տախի
պիր պէօյիւք միթիլնկին թէճէմ-
միւ օլընմաթը մուգարէր տիր :

— Իթալիս պահրիէ նազըրը
վարիտ օլան սիւալէ ճէվսպէն, Սէ-
լանիք վուգուաթը վե Մաքէթո-
նիս գարըլըլըլարը տէվլէթլէ-
րին գարարընը թէպտիլ իտէմէյէ-
ճէքլէր տէմիլ տիր :

Քէզա էվիլէրի կիւն Աւստրիա
խարիճիէ նազըրը գօթ Կօլուխո-
վսքի թիւհարան սընֆընտան պիր
հէյգէթին սիւալինէ ճէվսպէն,
«բահաթ օլըն, Շարգտա թիւհա-
րըլընը տէվամ իտին, գարը-
լըլըլըլար թէսքին օլընաճաք վե
մուհարէպէ իշիւն գօրգունըլ օլ-
մասըն» նէվինտէն պիր թազըմ
սէօլլէրլէ թիւհարարըն պիհինի
թէսքին իթմէթ իսթմիլ տիր :

ԵՈՒՆԱՆԻՍՏԱՆ

Եունան հիւքիւմէթի պիր թա-
րաֆտան Պապը Ալի իլէ ահանմէ-
լէր վե պիր նէվ իթթիֆաք գա-
վիլէշտիլմէքտէ օլտըլը կիպի,
տիկէր թարաֆտան տախի էլէ
կէչիլտիկի պուլկարը խըրըալա-
մազտա տըր : Սթանպոլ կազէ-
թալարընը միսէրրէթլէ եազտըլ.
լարը իւլրէ, Եունան բօյիսլերի
Լարիցատա 15 պուլկար թուլթ.
մուլլար : տիկէր իւլ պուլկար վօ-
լտա հապս օլընմըլլար, թէքրար
Ալիինտա կէչէն հաֆթա Եունոլ
վե Աբօսթոլոլ նամ էքի պուլկար
թուլթուլուլ : պուլկարտա 10,000
տրախմի վե միւլիր (?) էվրաք
պուլընմըլ : պուլ պուլկարլար վա-
լաք էվպիսի իլէ թէպտիլ կէզ-
մէքտէ իմիլէր :

— Ալիինտան պիրտիլիլիկի
իւլրէ՝ Եունան հիւքիւմէթի պուլ-
կա, գօմիթալարընտան չօգ մէք-
թուպար գապուլ իթմիլ : գօմի
թալար պու մէքթուպարլէ՝ Եու-

նանիստան չօգ զիյանլըլ վե-
րէճէլէրինի թէհտիտէն պիրտի-
րիլէր իմիլ, Թէսալիանըն պազը
թարաֆլարընտա խալլը տինամիթ
թուլթուլուլ :

ՍՕՆ ՀԱՎԱՏԻՍԱԹ

Սօֆիա 2 մայիս

Բրէնս հազրէթլերի Միլիստը
Բատկի գօվտու : Գապինէ տիւլ-
տիւ :

Թէլէֆօնտան ալընան մալի-
մաթա պինաէն, տիւն քիլիսէտէն
չըգտըլտան սօնրա պիլիլն վիւ-
քէլա Բրէնսին սէրայընա թէպրի-
լէ կիթմէլէրինտէ, Բրէնս մի-
նիստը Բատկի կէօրիւպ տէմիլ
«Նէ» իսթէյօրըն պէնիմ խանէմ-
տէ : չսարպ տըլարլ չըգալըն քի
ոնի խըվմէթճիլլէրլ տըլարը ալի-
մայլու :

Պուլնու իւլլերինէ Բատկի գա-
չարաք տըլարը չըգմըլ, վե տր-
գատընտան պիլիլն Միլիստըր-
լար գապինէին իսթիֆասընը եա-
զուպ Բրէնսէ թազտիմ իթմիլլէր :
Բրէնս իսթիֆանամէյի մէմուլնի-
լէթլէ գապուլ իթմիլ :

Բէվայէթլէ կէօրէ, եկնի գա-
պինէ Սթանպոլպիսթ վե Նու-
րօտնիաք բարթիլլերինտէն գարը-
լըլ օլաճաք, վե պունտան սօնրա
պիր թազըմ աքքեր թօրլանըլա-
ճաք ըմըլ :

Պալկարաքի Կլաւս

Սրանպոլ, 2 Մայիս

Սուլթան Րուլմէլի վալիլէրինէ
պիր իրաւէ Եօլլալուպ, թէլէկի-
գաթա նիհայէթ վերիլմէսին վե
միւհրիմ օլմայան էլլալաք թէլէկի
իտէն մէմուլարըն մէսուլ թու-
թուլաճազլարըն էմր ու իսթաթ
իթտի :

ԻԼԱՆ

Պազը սպօնէլէրիմիլտէն պիլգէ
վարիտ օլան սիվալլէրէ ճէվսպէն ի-
լան իտէրիլ քի եկնի Նէր օ-
լընան «Հալաթիլթ» կազէթաթ իլէ
պիլլիմ հիշ պիր միւնասիպէթիմիլ
եօգտըր :

Շու հալտէ մէքքիւր կազէթալը պիլ
հիշ պիր քիմէյէ Եօլլալալըլըլ վե Նէ-
տէ ապօնէլէրիմիլտէն քիմէյէն տա-
րէսին պիլ իլլիմիլլէ վէրիլիլ :

ՇՆՈՐՀԱՎԱԼԻԹ

Տօպրիլի. Սիլիստրէի եւ Ռուս-
ճուլի ազգայնոց շնորհակալքա կը
յայտնեմ իրենց այլ բարեացակամու-
թեան համար որով բարեհաճե-
ցան բաւական թուով գումաներ ընկ-
ինձմէ գրքերու եւ այլ գրական պի-
տոյից : Գրալաճառ

Ա. ԶԱՐԴԱՆԵԼԵԱՆ

Վառնա

ՔԱՏՐՈՆ

ՆԱՏԵԺՏԱ Հայ գերաստանկան
խուճըր վազը տեղս հանելով,
իրիկունը իր առաջին ներկայա-
ցումը պիտի տայ ՊՕՐԻՍ թատ-
րոնին մէջ, մասնակցութեամբ Օ-
ՐԻԱՆԹԱԼ խումբին :

Հրանդ Գալազյան

Одговорникъ Н. Држалецъ

Печатница Взаимность Варна